

Բարոյագէտ-փիլիսոփայ **Մաքի**, այս հարցումին տարբեր մօտեցում ունի: Մաքիի համաձայն, եթէ անհատ մը չյարգէ բարոյական պայմանագրութիւնը եւ բարոյական չար կամ վատ *վարմունք*⁽⁵³⁾ մը ունենայ, անոր մօտ կրնայ բարոյական ամօթի կամ ամօթխածութեան զգացում մը յառաջանալ, որ տեղի կ'ունենայ անձնական խղճին միջոցով, այսինքն՝ խղճահարութեամբ:

Այլ խօսքով, ընկերութեան մը մէջ ապրող անհատին համար անհրաժեշտ է (ծելով մը ան ստիպուած կամ հարկադրուած է), ընդունիլ այդ ընկերութեան բարոյական պայմանագրային կանոնները, կամայ թէ ակամայ: Այս բարոյական պայմանագրային կանոնները չյարգելու պարագային, ընկերութեան բոլոր անդամները պիտի վրդովին ու մեղադրեն խնդրոյ առարկայ անհատը, ինչպէս նաեւ պիտի դիմեն՝ հարկադրական զանազան միջոցներու կամ պատժամիջոցներու (Sanction): Ահա այս պարագային, խնդրոյ առարկայ անհատի մօտ, որպէս ներքին հարկադրական միջոց կրնայ բարոյական ամօթի կամ ամօթխածութեան զգացումը յառաջանալ, որ ինքնարժեւորման կորուստի զգացում մըն է:

Ամօթխածութեան յառաջացումը, տեղի կ'ունենայ, մասնաւոր «*ուրիշ ներքու*» ներկայութեան եւ անձնական խղճին⁽⁵⁴⁾ միջոցով, խղճահարութեամբ: Այս «Բարոյագիտութեան Հիմնական Հասկացութիւններ», եւ յօդուածները:

Քննադատութիւն.-

Նաեւ պայմանագրային տեսութիւնը վիճելի ու քննադատելի է եւ նոյնիսկ կարելի է զայն բարոյագիտութեան մարզէն հեռացնել, հետեւեալ երեք պատճառներով.-

- **Առաջին՝** անկարելի է անձնական խիղճը հիմնաւորել պայմանագրային տեսութեան մակարդակի վրայ: Խիղճը երբեք գործիք չի կրնար դառնալ: Առանց արտաքին պատիժներ կրելու, եթէ ես որոշ, ինծի համար նպաստաւոր առաւելութիւններ կարենամ ունենալ, անոնցմէ հրաժարիլը գոնէ խոհեմութիւն չի նկատուիր:
- **Երկրորդ՝** պայմանագրային տեսութեան մէջ, *լաւ ու բարին, վատն ու չարը* չեն ներկայանար իրենց բացարձակ իմաստով, այլ անոնք յարաբերական են: Այլ խօսքով, «պայմանագրային տեսութեան» մէջ, *լաւ ու բարին* կ'օգտագործուին յարաբերաբար, այսինքն «լաւ ու բարի՝ ... բանի մը համար», կամ «լաւ ու բարի՝ ... ինծի համար»:
- **Երրորդ՝** պայմանագրային տեսութիւնը յառաջացած է ընկերային – քաղաքական ու արդարութեան - արդարադատութեան ոլորտներէն ներս եւ որպէս բարոյագիտութեան հիմնաւորում չի կրնար ծառայել: Անոր միայն մէկ բաժինը, մարդոց պայմանագրութեան ընդունման պարտաւորութիւնը, կարելի է թերեւս բարոյական նկատել:

(53) **Բարոյական վարմունքի** (Moral Action) մասին, տե՛ս նաեւ, Մաս – 9, Էջ 437:

(54) **Խիղճ** (Conscience) հասկացութեան մասին, տե՛ս նաեւ, Մաս – 9, Էջ 472: